

բարձուելէ յետոյ, մէկը բարգաւաճեր է ու թագաւորութեան պատուի հասեր տասներորդ դարուն ու միւսը Մամիկոնեաններու յառաջդիմութեամբ ի Տարօն : »

«Արարատ», Երես 424. (Թարգմանուած գրարարէ)

Հայկական նախարարութեանց ջնջումը Հայաստանի մէջ և Քիւրդ աշիրաթապետութեանց զօրանալը մէկ կողմէն ալ կը բացատրուի այն պայմաններու տակ՝ որ Հայերը աստիճանաբար հակելով դէպ քաղաքակրթութիւն և ճարտարարուեստի ու առևտրական կեանքը, իրենց խիտ յարաբերութիւններն ու տիրող գաղափարականը տարեր հասուցել են զիրենք ազգութեան վիճակին՝ ցեղականութեան աւանդական առանձնաչնորձն բաժանելով. մինչդեռ Քիւրդերը առանձնայատուկ դարձնելով ընտանական կեանքը, ու հետի մնալով քաղաքակրթութենէ, մնացիւր են ցեղական նախարարարական եղծնալ վիճակի մէջ, որ այժմ կ'երևի աշիրաթապետական ձևի տակ, և կը վարեն հովուական (pastoral) կեանք :

Ըստ Լիւնի, «Եուն Քիւրդիստանի մէջ հովուական կեանքի առեղծուածը, դաշտախայրերու վրայ դժուարութիւններ կը ներկայացնէ. դժուար է կառավարել ժողովուրդ մը որ անհանգիստ կեանք անցընելու հակումներ ունի : »

Բնական էր որ Քիւրդերը իրենց անփոփոխ այդ վիճակով մնայլն միայն ցեղեր (tribus) : Տեսնենք թէ ի՞նչ է ցեղերու (tribus) քաղաքական նշանակութիւնը ըստ ընկերարան starckei. « Ընտանիքը երեք տարբեր ձևեր ունի. pısanıf. (famille). — (պզտիկ խումբ կազմուած ծնողներէ ու երախաներէ : pısanıfի խումբեր, (groupes de familles), (խմբումն որ քանի մը սերունդներէ վերջ, զանոնք ի մի կը հաւաքէ, հետեւելով աւելի կամ նուազ հեռաւոր ազգակցութեան : ) Գլան (Clans) հաւաքոյթ մը ուր ազգակցութիւնը չի կազմեր իրական կապ մը : Ասկէ դատ կայ ցեղը (la tribu) (պե-